

վրայ:՝ Հաննէ, այս ո՛չ այնքան ուսեալ բայց գործունեայ եւ ողջամիտ վանականը, իր ժամանակին համար անակնունելի եւ լուսամիտ յայտարարութիւններ կ'ընէ իր պաշտօնակիցներուն մէջ: — Կոլոտի բովանդակ գործունէութիւններէն վեր կր դասէ անոր գրական մեծագործութիւնները:

Հաննէ այնչափ զգածուած է եւ այնչափ ջիղ դրած է իր տողերուն մէջ, որ կ'արժէ անոնց բնագիրը ուսումնասիրել:

Չեմ կրնար հանդուրժել, կ'ըսէ, չճանուցանել անոր ամէնէն աւելի «յիշման արժանի գործն», որով «առաւել երախտաւոր երեւցաւ» հայ Եկեղեցւոյ: «Քանզի գոլով սա խանդակաթապէս սիրահարեալ ի սէր աստուածայնոց գիտութեանց,

1 Շղթայակիրն ալ անդին Երուսաղէմ Ս. Յակոբայ հրաշքները կը կարգադրէր. Թանկագին Յիշատակարան մ'ունինք այս մասին, որ նոյն ինքն Շղթայակրի համար կազմուած խոշոր հատորի մը, 24,5×17 մեծութեամբ 968 երեսներէ բաղկացած՝ «Ծագկաբաղ հատուածքին» վերջը դրած է, եւ որմէ արդէն քանի մը կոչում ըրինք:

Յիշատակագիրը, Պօղոս իբր. պատմէն ետքը թէ ինչպէս շէնցաւ եւ ճոխացաւ Երուսաղէմի Ս Յակոբը եւն Շղթայակրի ջանքերով, կ'ըսէ. «Մտեալ եղեւ եւս առ գրատունն լալ սորի՞ն անդիսանլ ճաշեալ. սոր տրեւ գրեալն զմանս եղբեալ, զմանս քայտայեալ, զմանս յիցալիբեալ՝ աւաղեաց եւ ցաւեաց զսիրտ Սեհիս. վասն որոյ գրեաց զգիրս առ ի վերոյգրեալ հարազատն իւր Յովհաննէս զարբիւրդն ի Բիւզանդիոյ՝ զի նա առաքեսցէ զդպրեմիս Գրեմիսն աստ. որպէս յորդորեմն եկն ի Սուրբ ջանս քրիստոսեան եւ հրամանաւ Սեհիս ձեռնամուխ եղեւ յաջողմամբն Աստուծոյ զեղբեալն քրիստ, զքայտայեալն վերալիբեալն զանդիսեալն քայտայեալն նորոգել էւ խալել. եւ արար այնպէս, որք իւրաքանչիւրում Յիշատակարանոջն բացարին ընթերցողացն» — Դիտել կուտանք այս տեղ թէ քանիցս յիշուած «Ծագկաբաղ հատուածք» անունը մենք դրինք Ազգ. Մատենադարանի այն ձեռագրին վրայ, որ տեսակ մը «Ժողովածու» է: